

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ "ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ԶԱՂԱՔԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐԱՔԿԻՐԻ ԲԱԺՆԻ ԵՎ ԱՐԱՔԿԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱԶԳԱՔԱՆԿՉՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄ" ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(1-ին մաս)**

Սույն Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ Իրականացնող գործընկեր) եւ Եվրոպայում անվտանգության եւ համագործակցության կազմակերպության երեւանյան գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ) միջեւ, որոնք միասին կոչվում են Կողմեր:

Նկատի ունենալով, որ Իրականացնող գործընկերը ողջունում է "ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի եւ Արաբկիրի համայնքի ազգաբնակչության միջեւ գործընկերության հաստատում" ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումը եւ համաձայնել է, ըստ անհրաժեշտության, համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարական այլ մարմինների, ինչպես նաեւ ԵԱՀԿ-ի հետ՝ Ծրագրի արդյունքներին հասնելու նպատակով, եւ հաստատում է, որ այդ արդյունքներին հասնելը պայմանավորված է իր կողմից նման ակտիվ համագործակցությամբ,

Նկատի ունենալով, որ ԵԱՀԿ մասնակից Պետությունների կողմից վստահվել է Ծրագրի իրականացման ֆինանսական եւ վարչական մոնիտորինգը,

Նկատի ունենալով, որ ձեռք է բերվել համաձայնություն, որ Կողմերը համատեղ իրականացնում են Ծրագիրը, որի համար ԵԱՀԿ-ն ստացել է արտաբյուջետային միջոցներ ԵԱՀԿ մասնակից Պետությունների կողմից,

ՈՒՍՏԻ, ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, հաշվի առնելով եւ հիմնվելով սույն Համաձայնագրում սահմանված՝ Կողմերի ներկայացուցչությունների, երաշխիքների եւ փոխադարձ համաձայնության վրա, Կողմերը համաձայնեցին հետեւյալի մասին.

**ՀՈՂՎԱԾ 1
Ծրագիրը**

Սույն Համաձայնագրի առարկա հանդիսացող Ծրագիրը նկարագրված է 1-ին Հավելվածում (Ծրագրի փաստաթուղթ) եւ 2-րդ Հավելվածում (Գործունեության պլան), որոնք կազմում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

**ՀՈՂՎԱԾ 2
Ծրագրի տեւողությունը**

Ծրագրի տեւողությունը կազմում է սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից հետո տասներկու (12) օրացուցային ամիս: Ծրագրի իրականացումն սկսվում է սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից երեք (3) օրացուցային օր հետո:

**ՀՈՂՎԱԾ 3
Իրականացնող գործընկերոջ պարտականությունները**

1. Իրականացնող գործընկերը պետք է ստանձնի սույն Համաձայնագրում եւ նրա Հավելվածներում նկարագրված խնդիրները՝ այնտեղ սահմանված ժամկետներում եւ եղանակով:

2. Իրականացնող գործընկերը պետք է մասնակցի 1-ին եւ 2-րդ Հավելվածներում նշված՝ Ծրագրի Գործադիր ղեկավար կոմիտեի հանդիպումներին ոստիկանության պետի մակարդակով:

3. Իրականացնող գործընկերը պետք է պատասխանատու եւ հաշվետու լինի ԵԱՀԿ-ին՝ երաշխավորելու համար, որ ԵԱՀԿ-ի կողմից տրամադրված բոլոր սարքավորումները եւ ապրանքները կօգտագործվեն բացառապես սույն Համաձայնագրում եւ նրա

Հավելվածներում նկարագրված նպատակներով: Իրականացնող գործընկերոջ սույն պարտավորությունը պետք է ուժի մեջ մնա սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց կամ դրա դադարելուց անկախ:

4. Իրականացնող գործընկերը Ծրագրով իր պարտականությունների կատարման համար պետք է աշխատանքի ընդունի անհրաժեշտ անձնակազմ եւ անհրաժեշտության դեպքում պետք է ուղղակիորեն պայմանագրային հարաբերությունների մեջ մտնի նրանց հետ՝ որպես գործատու: Նման անձնակազմը պետք է աշխատի Իրականացնող գործընկերոջ վերահսկողության եւ պատասխանատվության ներքո: ԵԱՀԿ-ն ոչ մի դեպքում չպետք է պատասխանատու լինի Իրականացնող գործընկերոջ կողմից Ծրագրով ստանձնած պարտականությունները կատարելու նպատակով աշխատանքի ընդունված անձնակազմի համար:

5. Հնարավորության սահմաններում Իրականացնող գործընկերը պետք է երաշխավորի, որ սույն Ծրագրով իրականացվող ուսումնական ծրագրերի մասնակիցները կշարունակեն իրենց համապատասխան գործառույթները Իրականացնող գործընկերոջ կառույցներում ուսումնական դասընթաց(ներ)ը անցնելուց առնվազն տասներկու (12) օրացուցային ամիս հետո, եւ որ Արաբկիրի ոստիկանության պետը պետք է շարունակի իր գործառույթների կատարումը առնվազն մինչեւ Ծրագրի իրականացման ավարտը:

6. Ծրագրի իրականացման, նրա մոնիտորինգի եւ Ծրագրի ազդեցության հետազոտման գնահատման նպատակներով Իրականացնող գործընկերը պետք է թույլատրի ԵԱՀԿ-ին, նրա պաշտոնյաներին եւ փորձագետներին անսահմանափակ մատչելիություն բոլոր հնարավոր գրագրության, տեղեկատվության եւ վայրերի նկատմամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման մատչելիությունը սահմանափակվում է կանոնակարգերով եւ ազգային օրենսդրությամբ՝ ելնելով հանրային եւ/կամ ազգային անվտանգության նկատառումներից:

7. Իրականացնող գործընկերը ԵԱՀԿ պաշտոնյաներին եւ փորձագետներին, որոնք ընդգրկված են Ծրագրի իրականացման մեջ, պետք է անվճար ապահովի համապատասխան գրասենյակային տարածքով Արաբկիրի ոստիկանության բաժնում:

8. Իրականացնող գործընկերը պետք է ապահովի բոլոր հարմարությունները եւ մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են ԵԱՀԿ-ին Ծրագրի իրականացման մոնիտորինգն իրականացնելու համար:

ՀՈԴՎԱԾ 4

ԵԱՀԿ պարտավորությունները

ԵԱՀԿ-ն պետք է.

1. իրականացնի սույն Համաձայնագրի Հավելվածներում սահմանված խնդիրները.
2. գնի Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ սարքավորումները եւ այլ ապրանքները, ինչպես նշված է սույն Համաձայնագրի Հավելվածներում, ԵԱՀԿ գնումների կանոնների համաձայն.
3. համակարգի եւ մոնիտորինգ իրականացնի Ծրագրի իրականացման եւ հատկացված միջոցների պատշաճ կառավարման նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 5

Բյուջեն եւ վճարումները

1. Ծրագրի բյուջեն պետք է սահմանվի սույն Համաձայնագրի 1-ին Հավելվածում: ԵԱՀԿ-ն ոչ մի դեպքում չպետք է կրի Ծրագրի իրականացման համար 1-ին Հավելվածում սահմանված գումար(ներ)ը գերազանցող ծախսերը:

2. Ծրագրի հաստատումը եւ դրա իրականացման մեկնարկը չպետք է պարտավորություն հանդիսանան ԵԱՀԿ-ի համար՝ իրականացնել Ծրագիրը կամ դրա որեւէ մասը:

3. Ծրագրի գործողությունների համար միջոցների օգտագործումը պետք է եսթակա լինի ներքին եւ արտաքին աուդիտի, ինչպես կարող է պահանջվել ԵԱՀԿ ֆինանսական կանոններով:

ՀՈՂՎԱԾ 6
Հաշվետվության կարգը

1. Ի լրումն սույն Համաձայնագրի 1-ին եւ 3-րդ Հավելվածներում սահմանված հաշվետվության պահանջների՝ Իրականացնող գործընկերը, ըստ պահանջի, պետք է ներկայացնի հաշվետվություններ, որոնք կներառեն.

ա) ձեռնարկված գործողությունների հակիրճ նկարագիրը.

բ) տեղեկատվություն նպատակներին հասնելու վերաբերյալ.

գ) գործողություններով ստեղծված ազդեցության գնահատումը. ներառյալ տեղ գտած որեւէ խնդիրը կամ հաջողությունը:

2. Պատմողական հաշվետվությունները պետք է ներկայացվեն երկու օրինակից. մեկը՝ հայերեն, մեկը՝ անգլերեն:

3. Ծրագրի իրականացումն ավարտելուց հետո՝ երեսուն (30) օրվա ընթացքում, Կողմերը պետք է պատրաստեն վերջնական ֆինանսական հաշվետվություն, որը պետք է պարունակի Ծրագրի ֆինանսական վիճակի մասին մանրամասն տեղեկատվություն, ներառյալ եկամուտը, ծախսերը եւ չծախսված հաշվեկշիռը: Վերջնական ֆինանսական հաշվետվությունը պետք է պարունակի նաեւ լրացուցիչ տեղեկատվություն՝ կապված ԵԱՀԿ կողմից Ծրագրի իրականացման նպատակով սարքավորումները եւ/կամ ապրանքները Իրականացնող գործընկերոջը որպես սեփականություն փոխանցելու հետ:

4. Վերջնական ֆինանսական հաշվետվությունը պետք է կազմվի անգլերեն, երկու (2) օրինակից, յուրաքանչյուր Կողմի համար՝ մեկական:

ՀՈՂՎԱԾ 7
Սարքավորումները եւ այլ ապրանքները

1. Բոլոր սարքավորումները եւ այլ ապրանքները, որոնք գնվում են ԵԱՀԿ կողմից, համաձայն վերը նշված 4-րդ հոդվածի 2-րդ կետի, ազատվում են բոլոր մաքսային տուրքերից, գանձումներից, հարկերից եւ այլ վճարներից:

2. Ծրագրի շրջանակում ԵԱՀԿ կողմից, համաձայն վերը նշված 4-րդ հոդվածի 2-րդ կետի եւ 7-րդ հոդվածի 1-ի կետի, գնված սարքավորումները եւ/կամ ապրանքները Իրականացնող գործընկերոջ կողմից նշված վայր առաքվելուց երեսուն (30) օրվա ընթացքում ԵԱՀԿ-ն պետք է մատչելի դարձնի նշված սարքավորումները եւ ապրանքները Իրականացնող գործընկերոջ համար, իսկ Իրականացնող գործընկերը պետք է տիրապետի սարքավորումները եւ ապրանքները:

3. ԵԱՀԿ կողմից սույն Համաձայնագրով գնված սարքավորումները եւ ապրանքները տիրապետելիս Իրականացնող գործընկերը պետք է ստանձնի ամբողջ պատասխանատվությունը՝ զերծ պահելով ԵԱՀԿ-ին որեւէ պահանջից, որը ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում է սարքավորումների եւ ապրանքների կամ դրանց հետ կապված շահագործումից եւ պահպանությունից, վարելով ճշգրիտ գույքագրման հսկողության տվյալներ, որոնք վերաբերում են սարքավորումներին եւ ապրանքներին: Նշված տվյալները, ըստ պահանջի, պետք է մատչելի լինեն ԵԱՀԿ-ին:

4. Ծրագրի իրականացումն ավարտելուց հետո Ծրագրի իրականացման նպատակներով սույն Համաձայնագրով ԵԱՀԿ կողմից գնված սարքավորումների եւ/կամ ապրանքների հանդեպ սեփականության իրավունքը ԵԱՀԿ կողմից պետք է փոխանցվի Իրականացնող գործընկերոջը: Վերջնական ֆինանսական հաշվետվությունը պետք է պարունակի այդ փոխանցման բոլոր մանրամասները:

ՀՈՂՎԱԾ 8
Պարտավորությունը

1. Իրականացնող գործընկերը պետք է ԵԱՀԿ-ին զերծ պահի որեւէ հայցից, կորստից եւ վնասից, որոնք ԵԱՀԿ-ն կարող է կրել որպես ուղղակի կամ անուղղակի հետեւանք Ծրագրում իր մասնակցությունից կամ դրանից բխող հանգամանքների արդյունքում:

2. Իրականացնող գործընկերը եւ նրա վերահսկողության տակ գտնվող անձնակազմը

պետք է խուսափեն ցանկացած գործողությունից, որը կարող է բացասաբար անդրադառնալ ԵԱՀԿ հեղինակության եւ կարգավիճակի վրա:

3. Իրականացնող գործընկերը պետք է ապահովի եւ պահպանի համապատասխան ապահովագրություն երրորդ կողմի պարտավորության նկատմամբ:

ՀՈՂՎԱԾ 9 Հրապարակայնությունը

ԵԱՀԿ կողմից Ծրագրի գործունեության ֆինանսավորումը պետք է լուսաբանվի Ծրագրի հետ կապված ցանկացած տպագիր նյութում: Իրականացնող գործընկերն իր տպագիր նյութերում, ելույթներում ու մամուլի հրապարակումներում կամ լրատվության այլ համանման միջոցներով պետք է հիշատակի ԵԱՀԿ մասնակցության վերաբերյալ:

ՀՈՂՎԱԾ 10 Հաղորդակցությունը

Ծրագրի իրականացման հետ կապված հաղորդակցությունը պետք է հասցեագրվի հետևյալ կերպով.

Հայաստանի Հանրապետության ոստիկանության համար՝
Գեներալ-մայոր Էդուարդ Ղազարյան
Երեւան, 375025, Նալբանդյան փողոց, 135
Հեռախոս՝ +374 1 58 71 25
Ֆաքս՝ +374 1 58 71 25, 54 81 37
Էլ. փոստ՝ staffmia@arminco.com

ԵԱՀԿ-ի համար՝
Կարել Հոֆստրա
Երեւան, 375009, Տերյան փողոց, 89
Հեռախոս՝ +374 1 54 10 62, ներքին՝ 115
Ֆաքս՝ +374 1 54 10 61
Էլ. փոստ՝ Carel.Hofstra@osce.org

ՀՈՂՎԱԾ 11 Վեճերի լուծումը

Սույն Համաձայնագրից մեկնաբանումից, իրականացումից եւ/կամ կիրառումից ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ պահանջները պետք է Կողմերի միջեւ լուծվեն բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով: Այն դեպքում, եթե Կողմերին չի հաջողվում վեճը լուծել բանակցային ճանապարհով, այն լուծվում է արբիտրաժային դատարանի միջոցով: Արբիտրաժային դատարանը ղեկավարվում է UNCITRAL արբիտրաժային կանոններով:

Նշանակող մարմին պետք է լինի Հաագայի արբիտրաժային դատարանը: Արբիտրների քանակը պետք է լինի մեկը (1): Դատավարության վայր պետք է հանդիսանա Վիեննան. Ավստրիա: Դատավարության ժամանակ օգտագործվող լեզուն պետք է լինի անգլերենը: Արբիտրի որոշումը պետք է վերջնական եւ պարտադիր լինի Կողմերի համար:

ՀՈՂՎԱԾ 12 Արտոնությունները եւ անձեռնմխելիությունը

Սույն Համաձայնագրում ոչինչ չի կարող դիտվել որպես ԵԱՀԿ-ի եւ նրա աշխատակազմի համար սահմանված արտոնությունները եւ անձեռնմխելիությունը սահմանափակող:

ՀՈՂՎԱԾ 13

Ուժի մեջ մտնելը, դադարեցումը եւ փոփոխումը

1. Սույն Համաձայնագիրը պետք է ուժի մեջ մտնի անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Կողմերի գրավոր ծանուցումը ստանալու օրվանից եւ պետք է ուժի մեջ մնա մինչեւ սույն Համաձայնագրից բխող պարտավորությունների կատարումը, եթե Կողմերից մեկը չի դադարեցնում վաղաժամկետ՝ այդ մասին ոչ պակաս, քան երեսուն (30) օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում տալու միջոցով, կամ անմիջապես ԵԱՀԿ կողմից՝ հրականացնող գործընկերոջ կողմից սույն Համաձայնագրով պարտավորությունները լրիվ կամ մասնակիորեն չկատարվելու դեպքում: Դադարեցման դեպքում ԵԱՀԿ՝ Ծրագրի իրականացման հետ կապված բոլոր պարտավորությունները պետք է անմիջապես դադարեն:

2. Ծրագրի իրագործելիությունը կասկածի տակ դնող կամ Ծրագրում եական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն առաջացնող հանգամանքներ ի հայտ գալու դեպքում հրականացնող գործընկերը, նախքան Ծրագրի իրականացումը շարունակելը կամ նախքան նման փոփոխություններ մտցնելը, պետք է ստանա ԵԱՀԿ գրավոր համաձայնությունը: Սույն Համաձայնագրի բոլոր փոփոխությունները պետք է ենթակա լինեն երկու Կողմերի համաձայնությանը եւ ամրագրվեն սույն Համաձայնագրի լրացուցիչ արձանագրությունում, որը կկազմի նրա անբաժանելի մասը: Ցանկացած նման արձանագրություն պետք է ուժի մեջ մտնի սույն հոդվածի 1-ին կետում նկարագրված ընթացակարգի համաձայն:

Սույն Համաձայնագիրն ստորագրվել է Երեւան քաղաքում, 2007 թ. մարտի 20-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն եւ անգլերեն: Երկու տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ անհամաձայնություն առաջանալու դեպքում գերակայում է անգլերեն տարբերակը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2007թ. մայիսի 29-ին:

ԵԱՀԿ

Հավելված 1

ԵԱՀԿ Երեւանի գրասենյակ	
Ծրագրի վերնագիրը՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ	
ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ (ԱՐԱԲԿԻՐԻ ՇՐՋԱՆ, ԵՐԵՎԱՆ)	

Ընդհանուր տեղեկություններ

Ծրագրի N:		ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ	
Ծրագրի անվանումը: Անվտանգության եւ	Անունը: Զարել Հոֆստրա		
Ռոստիկանության գործունեության	Պաշտոնը: Ռազմաքաղաքական		
Ռազմաքաղաքական հարցերը	գործունեության հարցերով Ծրագրի		
Աշխարհագրական տարածքը: Հայաստան	համակարգող		
Թեմատիկ կատեգորիան: Ռոստիկանության	Էլ.-փոստը: carel.hofstra@osce.org		
աջակցությունը	Հեռախոսը: (37410) 54 10 65/64/63/62		
Մեկնարկման ժամկետը: Ֆինանսավորումը			
ստանալուց անմիջապես հետո			
Ավարտման ժամկետը: Ծրագիրը սկսելուց			
12 ամիս հետո			
Ֆինանսավորման ընդհանուր պահանջները:			
ԵՎՐՈ-ով): 536,393			

Իրականացնող գործընկերը: Հայաստանի | |
Հանրապետության ոստիկանությունը | |
Ընտանիքները: Արաբկիրի համայնքի | |
բնակչությունը | |

1. Հիմնական տեղեկությունները եւ հիմնավորումը

Սույն ծրագիրը պայմանավորված է այն հիմնավորումով, որ ուշադրությունը հարկավոր է կենտրոնացնել համայնքի-հանրության-քաղաքացիների եւ նրանց կարիքների վրա, ոստիկանության աշխատանքը մատուցել նրանց նաեւ որպես հաշվետվողականության սկզբունքների վրա հիմնված ծառայություն եւ լիարժեքորեն հարգել մարդու իրավունքները:

"Համայնքային ոստիկանության" մոդելը հանդիսանում է մտածելակերպ եւ կազմակերպչական ռազմավարություն, որը թույլ է տալիս ոստիկանությանը եւ համայնքի բնակչությանը միասնական ուժերով լուծելու հանցագործության, կարգազանցության հետ կապված խնդիրները նոր եղանակներով եւ որակապես բարելավելու համայնքի յուրաքանչյուր բնակչի կենսակերպը: Պրակտիկան ցույց է տվել, որ ոստիկանությունը պետք է նպաստի հասարակական կարգի, հասարակության անվտանգության եւ ապահովության համակարգի բարելավմանը:

Նախատեսված ծրագրի իրականացումը համապատասխանեցվելու է 2001 թ.-ի սեպտեմբերի 19-ին Եվրախորհրդի Նախարարների հանձնաժողովի կողմից ընդունված Ոստիկանության Էթիկայի Եվրոպական կանոնակարգի եւ 10-րդ հանձնարարականի դրույթներին: Ծրագրով նախատեսված է հասնել հետևյալ նպատակների իրագործմանը.

* Ոստիկանությանը սերտացնել հանրության հետ եւ խթանել հանրության վստահությունը ոստիկանության նկատմամբ,

* Բարելավել ոստիկանության եւ բնակչության միջեւ տեղեկատվության փոխանակման գործընթացը,

* Բարելավել ոստիկանության կարողությունները հանցագործությունը կանխելու հարցում,

* Խթանել այս հարցերի շուրջ առավել սերտ համագործակցությունը Եվրախորհրդի հետ, որին անդամակցում է Հայաստանը:

Ծրագրով նախատեսված առաջադրանքները հիմնվելու են այն առաջարկությունների իրականացման վրա, որոնք արվել են նախկինում Կարիքների գնահատման Առաքելությունն իրականացրած ԵԱՀԿ փորձագիտական խմբի կողմից: Ծրագրով նախատեսված աշխատանքները տարվելու են երկու ուղղությամբ. "ներքին" ոլորտում տարվող գործունեությունը նպատակաուղղվելու է աշխատանքային ընթացակարգերի եւ մեթոդների վրա, իսկ "արտաքին"-ը անդրադառնալու է ոստիկանության եւ քաղաքացիական հասարակության միջեւ փոխազդեցության հարցերին: Ծրագրի ենթակառուցվածքը հիմնվելու է "Յենակետերի" հայեցակարգի վրա, որը թարգմանաբար անվանում ենք "Թաղային գրասենյակ": Այս առաջարկությունն արվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից: Տվյալ հայեցակարգով նախատեսվում է ապահովել թաղային տեսուչների եւ ոստիկանության բաժնի հանցագործությունների կանխարգելման ծառայությունների ապակենտրոնացված տեղակայումը, որի նպատակն է դրանք առավել մատչելի դարձնել բնակչության համար եւ առավել հեշտացնել բնակչության ակտիվ մասնակցությունը իրենց թաղամասերի հանցագործության եւ հանրային անվտանգության հիմնախնդիրների բացահայտման եւ լուծման հարցում:

2. Ծրագրի նպատակները

1. Իրականացնել ԵԱՀԿ-ի Կարիքների գնահատման առաքելության կողմից արված առաջարկությունները, որոնց համաձայն Երեւան քաղաքի Արաբկիրի շրջանում պետք է

ներդրվեն "Համայնքային ոստիկանության" մոդելի տարրերը:

2. Ստեղծել վերոհիշյալի համար անհրաժեշտ ենթակառուցվածքը, միեւնույն շրջանում վեց ոստիկանական հենակետեր հիմնելու միջոցով:

3. Ծրագրի արդյունքները եւ առաջադրանքները

Արդյունք 1. Եվրոպայի ոստիկանական էթիկայի եւ մարդու իրավունքների |
|ստանդարտների մասին Հայաստանի ոստիկանների իրազեկվածության մակարդակի |
|բարձրացումը |

Առաջադրանք 1.1. Ապահովել ընթացիկ փորձագիտական եւ խորհրդատվական օգնություն "Համայնքային ոստիկանության" մոդելի վերաբերյալ

* Իշխանություններին եւ ոստիկանության ղեկավարությանը (հանրապետական եւ շրջանային մակարդակներում) տրամադրել փորձագիտական եւ խորհրդատվական աջակցություն "Համայնքային ոստիկանության" մոդելի մասին,

* Ապահովել ռազմավարական ուղղորդում "ՅՈ" մոդելը շրջանային մակարդակում ներդնելու համար, ինչպես նաեւ իշխանություններին ապահովել օրենսդրական եւ վարչական ընթացակարգերի մասին խորհրդատվություն երկրի ներսում "ՅՈ" մոդելի հաջող ներդրումն իրականացնելու համար,

* Համագործակցել ոստիկանության ղեկավար մարմինների հետ մոդելի ծավալման /կասկադի/ ռազմավարությունը մշակելու ուղղությամբ:

Աղյուսակ 1.1. 1.1 Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ Եվրո	Եական ներդրումները	
Պայմանագրային հիմունքներով, Ծրագրի համար 1 համայնքային 106,813	ոստիկանության միջազգային փորձագետ (12 շ/մ, աշխատավարձի	
եւ աշխատողների ընդհանուր ծախսերը)		
Պայմանագրային հիմունքներով, Ծրագրի համար 1 համայնքային	ոստիկանության միջազգային վերապատրաստող փորձագետ (12	
շ/մ, աշխատավարձի եւ աշխատողների ընդհանուր ծախսերը)		
Պայմանագրային հիմունքներով մեկ տեղացի փորձագետ ոստիկան 10,800	(12 շ/մ)	
Պայմանագրային հիմունքներով, Ծրագրի համար 2 փորձագետ, 75,600	BLA (12 շ/մ)	
Պայմանագրային հիմունքներով, Ծրագրի համար միջազգային 10,000	փորձագետների կողմից կատարված այցելության	
ճանապարհածախսերը		
2 թարգմանիչ (12 շ/մ)	19,200	
Ծրագրի համար մեքենա	15,000	

Առաջադրանք 1.2. Ոստիկանության հրամանատարների հետ կլոր սեղան քննարկումներ

* Վերապատրաստման դասընթացներ "Համայնքային ոստիկանության" հայեցակարգի

մասին ղեկավարության, իսկ մյուսը Արաբկիրի շրջանի մակարդակով) կազմակերպում,
 * Ոստիկանության Էթիկայի մասին Եվրոպական Կանոնակարգի եւ դրա պրակտիկ կիրառության ուղղությամբ արձանագրված փորձի մասին կլոր սեղան քննարկում (Արաբկիրի շրջան):

Աղյուսակ 1.2. 1.2 Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ էական ներդրումները			Եվրո
Լրացուցիչ ներդրումներ չեն պահանջվում			

Առաջադրանք 1.3. Ռեսուրսային դասընթացների կազմակերպում Արաբկիրի ոստիկանության բաժնի աշխատողների համար

- * "Չամայնքային ոստիկանության" մեթոդների մասին վերապատրաստման դասընթացների կազմակերպում (չորս),
- * Փոփոխությունների կառավարման վերաբերյալ երկու սեմինար,
- * Նոր ստանդարտ հաշվետվության ձեւաթղթերի մշակումը եւ ներդրումը,
- * Չամակարգչային ուսուցման ուղղությամբ վերապատրաստման դասընթացի կազմակերպում 50 աշխատողի համար,
- * Ոստիկանների միջեւ մրցույթի կազմակերպում (պարգեւատրում):

Աղյուսակ 1.3. 1.3-ի Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ էական ներդրումները			Եվրո
Վերապատրաստում տեղացի առևտրային մատակարարի հետ կայմանագիր կնքելու հարցերի մասին			5,000
25 համակարգչային/տպիչ սարքավորումներ		25,000	
Արաբկիրի շրջանի ոստիկանատանը LAN-ի հիմնադրումը			1,000
Ոստիկանության աշխատողների միջեւ մրցույթի կազմակերպում /պարգեւատրում/			1,500

Առաջադրանք 1.4. Աջակցության տրամադրում "Ինդիրների լուծման" ոստիկանական մեթոդների ներդրման համար

- * Ոստիկանության աշխատողների համար "Ինդիրների լուծման" ոստիկանական մեթոդների ներդրման վերաբերյալ վերապատրաստման կազմակերպում,
- * Աջակցության տրամադրում համակարգչային ձեւաթուղթը մշակելու հարցում, որը պետք է փոխարինի հաշվետվության հին ստանդարտներին,
- * Հաղորդակցության սարքավորումներ,
- * Գրասենյակային սարքավորումներ:

Աղյուսակ 1.4. 1.4-ի Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ էական ներդրումները			Եվրո
25 շարժական ռադիոսարքերի տրամադրում Արաբկիրի շրջանի Տեղամասային տեսուչների համար (ներառյալ, բազային կայանը)			15,000

Պատճենահանման մեքենա, թղթի ու ներկի /տոների/ բավարար	3,000
յաշար	
10 ցուցատախտակների տրամադրում շրջանի բնակչությանը	5,000
տեղեկատվություն հաղորդելու համար	
10 սպիտակ գրատախտակների տրամադրում տեղամասային	1,000
տեսուչների եւ տեղացի ոստիկանների կողմից քննարկումներ	
կազմակերպելու համար	
Վերապատրաստման նյութերի ապահովում	4,000

Արդյունք 2. Բնակչության հետ ոստիկանության կապերը հզորացնելու համար |
անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը |

Առաջադրանք 2.1. Արաբկիրի շրջանում /բնակարաններում/ վեց հեռակետերի
շինարարությունը եւ սարքավորումը

- * Պայմանագրային հիմունքներով տեղացի փորձագետի համալրումը, որը պետք է
օգնի շինարարական ծրագրերի նախապատրաստման եւ շինարարական աշխատանքների
վերահսկման հարցերում,
- * Շինարարական աշխատանքների (ներառյալ էլեկտրականության, կոյուղու,
ջրմուղի համակարգերը) կազմակերպումը,
- * Գրասենյակների սարքավորումը առաջնային անհրաժեշտության կահավորմամբ եւ
գրասենյակային սարքավորումներով:

Արդյունակ 2.1. 2.1.-ի Առաջադրանքի կատարման համար	Եվրո
անհրաժեշտ էական ներդրումները	
Տեղացի փորձագետի համալրում (6 շ/մ)	6,000
Շինարարական պայմանագրի կնքում	60,000
Առաջնային անհրաժեշտության կահույքի ձեռքբերում	5,000
Գրասենյակային առաջնահերթ սարքավորումների ձեռքբերում	5,000

Արդյունք 3. Ոստիկանության կերպարի մասին եւ հանրության կողմից |
ոստիկանության նկատմամբ դրական վերաբերմունքի բարելավումը |

Առաջադրանք 3.1. Հանրության հետ հարաբերությունների եւ լրատվական
միջոցների հետ կապերի հաստատման ուղղությամբ ոստիկանության կարողությունների
հզորացումը

- * Ոստիկանության հրամանատարների համար "Հանրային հարաբերությունների
ոլորտում վարվող քաղաքականությունը եւ ոստիկանությունը" թեմայի վերաբերյալ
վերապատրաստման դասընթացների կազմակերպումը,
- * Ոստիկանություն-մամուլ փոխհարաբերությունների մասին, Հայաստանի
ոստիկանության եւ մասսայական լրատվության միջոցների ներկայացուցիչների
մասնակցությամբ կլոր-սեղան քննարկման կազմակերպումը,

* Հաշվետվողականության եւ թափանցիկության սկզբունքների վրա հիմնված "նստիկանություն-մամուլ" փոխհարաբերությունների պատշաճ, արհեստավարժ համակարգի ստեղծման հարցում աջակցության ապահովում:

Արդյունակ 3.1. 3.1-ի Առաջադրանքի կատարման համար լանհրաժեշտ եական ներդրումները	Եվրո
Պայմանագրային հիմունքներով 1 շաբաթ ժամկետով երկու միջազգային փորձագետի համալրում (վարձավճարներ, ճանապարհածախս, ամսական սպառողական վճար)	10,070
2 x մեկ պայմանագրային հիմունքներով նստիկանի համալրում PR-ի/մամուլի/ եւ լրատվության փորձառությամբ, մեկ շաբաթ ժամկետով (վարձավճարներ, ճանապարհածախս, ամսական սպառողական վճար)	10,070
Ուսումնական նյութերի մշակումը եւ հրատարակումը	1,500
Ներկայացուցչական ծախսերը	500

Առաջադրանք 3.2. Հանրության հետ կապերի հաստատման ուղղությամբ տարվող գործունեության համար աջակցության ապահովումը

* Համայնքի հետ նստիկանության կողմից տարվող աշխատանքների վերաբերյալ սովորական տեղեկագրի հրատարակումը,

* Կարճամետրաժ ռադիո եւ հեռուստատեսային ծրագրերի հեռարձակումը,

* Պամֆլետների, պլակատների տարածումը

Արդյունակ 3.2. 3.2-ի Առաջադրանքի կատարման համար լանհրաժեշտ եական ներդրումները	Եվրո
Արաբկիրի նստիկանության տեղեկագրի նախագծման եւ հրատարակման ծախսերը	15,000
Ռադիո եւ հեռուստատեսային ծրագրերի հեռարձակման ծախսերը	20,000
Պամֆլետների, պլակատների նախագծման եւ տպագրման ծախսերը	5,000

Արդյունք 4. Հանցագործությունների կանխարգելման միջոցառումները

Առաջադրանք 4.1. Տարբեր տեսակի հանցագործությունների կանխարգելման ընթացքում համայնքին առավել ակտիվորեն ներգրավելու ուղղությամբ տարվող աշխատանքները

* Հանցագործությունը կանխարգելելու ուղղությամբ տվյալ շրջանում նկարահանված ֆիլմերի էկրանավորումը,

* Արաբկիրի շրջանի դպրոցների հետ համատեղ, հանցագործության կանխարգելման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը:

Աղյուսակ 4.1. 4.1-ի Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ եական ներդրումները		Եվրո
Տեսաֆիլմերի նկարահանման ծախսերը	2,000	
Տեսախցիկի եւ պրոյեկտորի ձեռքբերում ֆիլմարտադրության/ ցուցադրման համար		4,000
Հանցագործության կանխարգելման ուղղությամբ դպրոցներում տարվելիք աշխատանքների համար անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը. մշակվելու է փորձագետների կողմից		0

Արդյունք 5. Արդյունքների մոնիտորինգը եւ գնահատումը

Առաջադրանք 5.1. Արդյունքների մոնիտորինգի եւ գնահատման աշխատանքները

- * Ծրագրի իրականացման ուղղությամբ առաջընթացը պարզելու նպատակով հանրային կարծիքի ուսումնասիրման համար երկու հարցումների կազմակերպումը,
- * Մեկ հարցման կազմակերպում Արաբկիրի շրջանի ոստիկանության շրջանում, որի նպատակն է ստուգել համայնքամետ ոստիկանական մեթոդների մասին նրանց ունեցած ըմբռնումները եւ դրական վերաբերմունքը,
- * Ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ հորհրդածողովի կազմակերպում ծրագրի արդյունքների վերաբերյալ,
- * Եռամսյակային գնահատման կազմակերպումը:

Աղյուսակ 5.1. 5.1-ի Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ եական ներդրումները		EUR
3 x ենթապայմանագրեր հանրային կարծիքի հարցումները կազմակերպելու համար		28,500
1 x երկու միջազգային փորձագետի համալրումը պայմանագրային իմունքներով (10շ/օ) (ճանապարհածախս ամսական սպառողական վճար)		3,700

Արդյունք 6. Արդյունավետ կառավարման միջոցով ծրագրի նպատակների լիարժեք իրականացումը

Առաջադրանք 6.1. Ծրագրի իրականացման համար շարունակական վարչական օժանդակության ապահովումը (CIT ծրագրի հետ ժամկետները բաշխելու հիման վրա)

- * Պայմանագրի կնքում տեղացի օժանդակ աշխատակազմի հետ,
- * Գրասենյակային տարածքի վարձակալում,
- * Գրասենյակային եւ համակարգչային սարքավորումների եւ նյութերի գնում,
տեղադրում եւ գործարկում:

Աղյուսակ 6.1. 6.1-ի Առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ եական ներդրումները	Եվրո
Տեղացի օժանդակ աշխատակազմը (ֆինանսական օգնական, լադինիստրատիվ օգնական, ծրագրի ազգային համակարգող, իրավաբանական աջակցության հարցերով Ազգային աշխատակից)	16,200
Գործադիր վերահսկիչ հանձնաժողովի հանդիպումներում մասնակիցների ամբողջ ճանապարհածախսը	2,000
Գրասենյակի հաղորդակցման եւ անվտանգության ծախսերը	11,200
Վառելիք, քսայուղեր եւ պահեստամասեր ծրագրի մեքենայի համար	6,000
Գրասենյակային եւ համակարգչային սարքավորումների համար նյութեր, գրասենյակային պիտույքներ, անհրաժեշտ նյութեր	7,440
Ներկայացուցչական ծախսերը	5,000
Գրասենյակային եւ համակարգչային սարքավորումներ	4,400
Գրասենյակային տարածքի վարձակալումը	7,500
Գրասենյակային կոմունալ ծախսերը	2,400

4. Ճշտումներ կատարելու աղբյուրները (Նվաճումների ինդիկատորները)

Քանի որ ծրագրի հիմնական նպատակն է առավելապես բարելավել եւ առավել ակտիվացնել ոստիկանության եւ բնակչության միջեւ փոխհարաբերությունները (ղեռես պետք է սկսել Երեւանում մեկ փորձնական ծրագրից), չափազանց կարեւոր է բնակչության շրջանում Հայաստանի ոստիկանության կերպարի եւ ակնկալիքների մասին ճշգրիտ պատկերացումներ ձեւավորել:

Մեկնարկային կետը համարվել է Արաբկիրի շրջանի բնակչության եւ Արաբկիրի ոստիկանության բաժնի ոստիկանների հանրային կարծիքի հարցման արդյունքները, որն իրականացվել է 2003 թ.-ին նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին տեղական ոչ-կառավարական կազմակերպության կողմից: Այն ներառում էր ավելի քան 1,000 պատասխանորդների հարցումը, որոնք ներկայացվել են որպես վիճակագրորեն ներկայացուցչական ընտրանք: Այն իրականացվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության լիարժեք աջակցությամբ եւ համագործակցությամբ: Հարցաթերթիկը համապատասխանեցվել էր միջազգայնորեն փորձված մոդելին:

Հաշվի առնելով այն փաստը, որ մինչեւ նախնական հարցումն իրականացնելը եւ նախքան ծրագրի համար ակնկալվող մեկնարկային ժամկետը պետք է անցներ երկու կամ ավելի տարի, ծրագիրը սկսելուց հետո նախատեսվում է իրականացնել հերթական հարցումը: Մյուս հարցումը իրականացվելու է ծրագիրը սկսելուց 9 ամիս հետո: Այս հանրային հարցումները համարվելու են նվաճումները գնահատելու հիմնական ինդիկատորը: Եականն այստեղ այն է, որ այս հանրային հարցումների արդյունքները հրապարակվեն հանրության շրջանակներում:

5. Ենթադրությունները եւ ռիսկերը

Ենթադրություն

ԵԱՀԿ-ի մասնակից պետությունների կողմից ստանձնած բարձր մակարդակի քաղաքական |
կարտավորություններին համապատասխան, ըստ Եվրոպայի անվտանգության |
Կանոնադրության պարբերություն 44-ի, որն ընդունվել է Ստամբուլի |
Գագաթաժողովում 1999 թ.-ի նոյեմբերին, ինչպես նաև Բուդաբեշտում 2001 թ.-ի |
դեկտեմբերի 4-ին Նախարարների խորհրդի ժողովում ընդունված Որոշում 9-ի |
համաձայն, Ծրագիրը ենթակա է լիարժեք ֆինանսավորման:

Ռիսկը

Անբավարար ֆինանսավորումը անհնար կդարձնի Ծրագրի լիարժեք իրականացումը:

Առաջարկվող հակամիջոցառումը

Ծրագրի իրականացումը կսկսվի անհրաժեշտ ֆինանսավորման զգալի մասը (օրինակ, |
50%) հաստատապես պահանջելու դեպքում, եւ հետագա ներդրումների հաստատակամ |
լակնակալիքների առկայության դեպքում: Հաշվի առնելով վերոհիշյալը, ԵԱՀԿ-ն |
բացահայտ կերպով նախատեսում է, որ Ծրագրի հաստատումը եւ մեկնարկումը չի |
ենթադրում ամբողջությամբ իրականացնելու պարտավորություն:

Ենթադրություն

Ծրագիրը նպատակաուղղված է Հայաստանի ոստիկանությանը օրենքի կիրարկման |
բազմաթիվ ժամանակակից միջոցներով, մեթոդներով եւ եղանակներով ապահովելու |
վրա: Ընթացիկ օրենսդրությունը եւ սորմատիվային բազան թույլ կտա ապահովել |
դրանց արդյունավետ գործնական կիրառումը:

Ռիսկը

Ներկա օրենսդրության եւ սորմատիվային բազայում առկա բացթողումները եւ |
հակասությունները կարող են խոչընդոտել որոշ գործունեության իրականացումը կամ |
նվազեցնել դրանց ազդեցությունը:

Առաջարկվող հակամիջոցառումը

Սորմատիվային եւ օրենսդրական բազայի շուրջ իրավիճակը մշտապես վերահսկվելու է |
կոնկրետ հիմունքներով: Գործառնությունների հարցերով Ծրագրի ղեկավարը |
հաղորդակցվելու է Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ, |
ներկայացնելով իր կարծիքը Հայաստանի Հանրապետության ոստիկանության |
սորմատիվային բազայում առկա բացթողումների մասին, որպեսզի արդյունքում |
ինհարավոր լինի իշխանություններին ներկայացնել այդ բացթողումները լրացնելու |
մասին առաջարկությունները: Ինչ վերաբերում է իրավական բազային, օրենսդրական |
նախագծման եւ հաստատման ցիկլը կարող է գերազանցել ծրագրի կարճատեւ ժամկետը |
(12 ամիս):

Ենթադրությունը

Ոստիկանները/տղամարդիկ եւ կանայք/ եւ ոստիկան սպաները, որոնք օժանդակություն |
են ստացել Ծրագրի գործունեության արդյունքում, եթե չկան Հայաստանի |
Հանրապետության ոստիկանության պետի տեղակալի կողմից սահմանված բացառիկ |
իանգամանքներ, պետք է մնան իրենց զբաղեցրած պաշտոններում եւ չպետք է |
նշանակվեն այլ պաշտոններում, կամ չպետք է ուղարկվեն կենսաթոշակի, կամ չպետք |
է կամավոր կերպով հեռանան իրենց ծառայությունից, առնվազն 18 ամիս ժամկետով, |
որպեսզի հնարավոր լինի նկատել փորձնական բարելավումները նրանց |
կարողությունների եւ հմտությունների կատարելագործման առումով:

Ռիսկը

Վերապատրաստված կադրերի վերանշանակումները, որոնք կարող ենք հանգեցնել |
Ծրագրի ազդեցության նվազեցմանը եւ փոշիացմանը:

| Առաջարկվող հակամիջոցառումը |
| Ծրագրի շրջանակներում, Կառավարությունը պետք է պարտավորություն ստանձնի նման |
| լտեսակի վերանշանակումներից ձեռնպահ մնալու համար: Վերապատրաստման դասընթացին |
| մասնակցելու համար ընտրված յուրաքանչյուր անձ, պետք է համաձայնություն տա |
| լայն մասին, որ ոչ մի դեպքում կամավոր չի հեռանալու իր ծառայությունից |
| վերապատրաստումն ավարտելուց հետո 18 ամսվա ընթացքում: Վերանշանակման |
| ղեկավարում, Երեւանի ԵԱՀԿ գրասենյակը պետք է կանխավ տեղեկացվի այդ մասին եւ |
| լանհրաժեշտության դեպքում պետք է հնարավորություն ստանա իրենց մտահոգությունը |
| լարտահայտելու համար: Ծրագիրը հիմնված է գործընկերայնության ոգու վրա եւ |
| Կառավարության անունից հանդես եկող գործընկեր կառույցը լիարժեքորեն պետք է |
| լգիտակցի այն փաստը, որ նա պետք է հավասար պատասխանատվություն կրի նախատեսված |
| լնպատակներին լիարժեքորեն հասնելու ճանապարհին Ծրագրի ազդեցության հարցում |
| լանկումային իրավիճակ կամ ձախողում առաջացնելու համար: |

6. Հորիզոնական բնույթի հարցեր

Հայաստանի կառավարությունը, որը ներկայացված է Հայաստանի Հանրապետության ոստիկանության անունից, պետք է իր համաձայնությունը տա ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հետեւյալ նախապայմանների վերաբերյալ:

> Մատչելիության իրավունքը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը համապատասխան մատչելիություն ապահովի պաշտոնյաների հետ հանդիպումների, արձանագրություններից օգտվելու եւ անհրաժեշտ տեղամասեր այցելելու հարցում, համագործակցության համաձայնեցված շրջանակներում եւ ազգային օրենսդրության դրույթներին համապատասխան:

> Ֆիզիկական անվտանգությունը Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ միջոցառումներ ծրագրի իրականացման մեջ ընդգրկված միջազգային փորձագետների ֆիզիկական անվտանգությունը եւ ապահովությունը երաշխավորելու համար:

> Պաշտոնավարության շարունակականությունը Վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար մասնակիցների թեկնածության առաջադրումը պետք է ուղեկցվի իրենց կազմակերպությունների կողմից ներկայացվող երաշխավորագրով առ այն, որ նրանք պետք է շարունակեն իրենց գործառույթները առնվազն մեկ տարի վերապատրաստումն ավարտելուց հետո: Ծրագրի իրականացման ընթացքում, Երեւանի ԵԱՀԿ գրասենյակը պետք է կանխավ տեղեկացվի ռոտացիայի, վերանշանակման, կենսաթոշակի նշանակման բոլոր տեսակի դեպքերի մասին կամ ավագ պաշտոնյաներին իրենց ծառայությունից ազատելու մասին (սկսած փոխգնդապետի կամ համագոր աստիճանից) եւ պետք է հնարավորություն ունենա իր առարկությունն արտահայտելու համար, եթե տվյալ ռոտացիան, վերանշանակումը, կենսաթոշակի անցնելը կամ ծառայությունից կամավոր հեռանալը ակնկալվում է, որ կթողնի բացասական ազդեցություն Ծրագրի իրականացման վրա: Եթե վերապատրաստման դասընթացի մասնակիցը վերանշանակվում է, կենսաթոշակի է անցնում կամ կամավոր կերպով հեռանում է ծառայությունից, ապա Կառավարության անունից որպես գործընկեր հանդիսացող կառույցից կարող է պահանջվել ԵԱՀԿ-ին վերադարձնել վերապատրաստման համար կատարված ծախսերը, որն իր հերթին հնարավորություն կտա ռեսուրսներ ապահովել վերանշանակված կամ կամավոր կերպով հեռացած իրավահաջորդ աշխատակցին վերապատրաստելու համար, որն էլ անհրաժեշտ է Ծրագրի ազդեցությունը պահպանելու համար:

Ներկա ծրագրի իրականացումը ենթակա է ԵԱՀԿ-ին բավարարող պայմաններով վերոհիշյալ նախադրյալների կատարմանը կամ հավանական կատարմանը: Եթե նախապայմաններից մեկի կամ մի քանիսի իրականացումն անհնար է դառնում, ապա ԵԱՀԿ կարող է իր հայեցողությամբ, շարունակել, կասեցնել կամ դադարեցնել ծրագրի կամ դրա բաղադրիչների իրականացումը:

7. Իրականացման ձեւերը

7.1 Ժամկետները

Ծրագիրը պետք է մեկնարկի Իրականացման մասին Պայմանագիրը ստորագրելուց հետո: Ստորագրումը պետք է տեղի ունենա այն դեպքում, երբ կկատարվեն բավարար ֆինանսական ներդրումներ շոշափելի եւ կայուն արդյունքներ ապահովելու համար (օրինակ, ծրագրի բյուջեի 50%): Ներկա Ծրագրի իրականացումը ենթակա է ֆինանսավորման հատկացմանը արտաբյուջետային միջոցների կամ կանոնավոր բյուջետային ֆինանսավորման միջոցով: Ծրագրի գործունեությունը պետք է իրականացվի ըստ առկա ֆինանսավորման ծավալների: Այս Ծրագրի մասին ԵԱՀԿ-ի կողմից տրված հավանությունը հետեւաբար չի համարվում ԵԱՀԿ-ին պարտադրող պայման առ այն, որ ԵԱՀԿ-ն պետք է իրականացնի Ծրագրում թվարկված գործունեությունը կոնկրետ սահմանված ժամկետներում:

Ծրագրի իրականացման առաջընթացը գնահատվելու է եռամսյակային գնահատման միջոցով (ծրագիրն ավարտելուց հետո 3 ամսվա ընթացքում): Այս նպատակի համար փորձագետներ են ուղարկվելու դոնոր պետությունների կողմից: Գնահատման գործընթացի արդյունքում արված առաջարկությունները ներկայացվելու են ծրագրի բոլոր կողմերին:

7.2 Գործընկերային հարաբերությունների շրջանակը

Ծրագիրն իրականացվելու է Երեւանի ԵԱՀԿ-ի գրասենյակի կողմից: Վիեննայի ԵԱՀԿ Զարտուղարության Ոստիկանության Ռազմավարական Կենտրոնը (SPMU) անհրաժեշտության դեպքում ապահովելու է համապատասխան խորհրդատվությամբ եւ օժանդակությամբ:

Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը հանդիսանալու է Կառավարության անունից համագործակցող տեղական կազմակերպությունը:

Հայաստանի կառավարությունը պետք է հոգա բոլոր մաքսատուրքերի եւ այլ գանձումների վճարման հարցերը, որոնք կապված են այս Ծրագրի ներքո գնված սարքավորումների ներմուծման, փոխադրումների, ձեռքբերման, պահեստավորման հետ, ինչպես նաեւ մնացած հարակից ծախսերը:

Ներկայիս Ծրագրի Կատարման ձեւի ընտրությունը պայմանավորված է հետեւյալ սկզբունքներով.

* ապահովել Էական հարցերի վերաբերյալ պարբերական խորհրդակցություններով եւ որոշումների համատեղ կայացմամբ,

* ապահովել պայմանագրերի, գնման պատվերների անհապաղ ձեւակերպումներով, ինչպես նաեւ տրամադրված ծառայությունների կամ ապրանքների համար ժամանակին կատարվող վճարումներով,

* ներառել ֆինանսական հաշվետվության այնպիսի համակարգ, որը բնութագրվում է թափանցիկությամբ, իրատեսական ժամկետներում վճարումների եւ հատկացումների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հնարավորությամբ, ինչպես նաեւ բյուջետային հոդվածների/կատեգորիաների ծածկագրերի եւ ծրագրերի միջեւ ֆոնդերի փոխանցման հնարավորությամբ,

* թույլ է տալիս իրատեսական ժամկետներում ստանալ հետադարձ արձագանք տրամադրված աջակցության ազդեցության մասին եւ ապահովել տեղում տրամադրվող աջակցության մոնիտորինգը:

Նախատեսվում է ստեղծել Գործադիր վերահսկիչ հանձնաժողով (ԳՎՀ), որի նպատակն է վերահսկել ծրագրի նպատակների լիարժեք նվաճման ուղղությամբ արձանագրված առաջընթացը: Դրա կազմը հիմնված է գործընկերային մոտեցման, արդյունավետության եւ լիարժեք թափանցիկության վրա, որով էլ պայմանավորված է ներկա ծրագիրը: Այն նախագահելու է ԵԱՀԿ ղեկավարը, ընդ որում մշտական անդամներ են համարվելու

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը, անհրաժեշտության դեպքում, այլ պետական մարմինների բարձրաստիճան ներկայացուցիչները, ԵԱՀԿ-ի Գլխավոր քարտուղարի ոստիկանության հարցերով ավագ խորհրդատուն, ներկայացուցիչներ ԵԱՀԿ ֆինանսավորող մասնակից պետություններից, եւ քաղաքացիական հասարակությունից: Հանձնաժողովի բոլոր անդամները պետք է գործադիր լիազորությունը ստանձնեն իրենց համապատասխան կազմակերպությունների կողմից: Հանձնաժողովը, պետք է.

* վերանայի եւ հաստատի ծրագրի իրականացման առաջընթացի մասին Ծրագրի Փորձագետի կողմից ներկայացված հաշվետվությունները,

* մանրամասնորեն վերահասի ծրագրի գործունեության արդյունքները եւ ազդեցությունը,

* հաստատի բյուջեում կատարված այն եական փոփոխությունները, որոնք վերաբերում են ֆինանսական միջոցների օգտագործման զգալի փոփոխություններին,

* քննարկի եւ հաստատի հաջորդ ժամանակաշրջանի աշխատանքային ծրագիրը,

* գնահատի տեղում տիրող իրավիճակի փոփոխությունները եւ շահառու Կառավարության համագործակցության մակարդակը եւ համապատասխանաբար վերափոխի Ծրագրի ռազմավարությունը,

* վերացնի տեխնիկական եւ քաղաքական բնույթի վերջնական խոչընդոտները, որոնք կարող են հետաձգել Ծրագիրը կամ այլ կերպ կարող են խանգարել ծրագրի իրականացման հարցում:

Ծրագրի իրականացումը վերահսկելու ընթացքում իր անմիջական ներգրավվածությունը պահպանելու նպատակով, հանձնաժողովի հանդիպումները կազմակերպվելու են Երեւանում՝ չորս ամիսը մեկ անգամ:

Այս ծրագրի ներքո կազմակերպված ուսումնական գործուղումների եւ վերապատրաստումների արդյունքում օգտված ազգային փորձագետները ներկայացնելու են հաշվետվություններ իրենց ուսուցման եւ վերապատրաստման մասին, որտեղ պետք է ներառվի այցելած վայրերի, ուսումնասիրած օբյեկտների համառոտ նկարագիրը, ինչպես նաեւ այն միջոցառումների նկարագիրը, որոնք իրենց կարծիքով կարելու են իրենց կառույցներում բարելավումներ կատարելու առումով եւ հետագա ուսուցման կարիքն ունեն: Կառավարության անունից հանդես եկող գործընկեր/իրականացնող կազմակերպությունը պետք է ապահովի այս հաշվետվությունների ժամանակին նախապատրաստումը եւ ներկայացումը Ծրագրի փորձագետին:

7.3 Այլ միջոցառումներ

Ծրագրի իրականացումն օժանդակվելու է հետեւյալի միջոցով.

* Ծրագրի երկու պայմանագրային միջազգային փորձագետ (12 շ/մ) (ներառյալ ճանապարհածախսը),

* Մեկ տեղացի ոստիկան փորձագետ,

* Տեղացի օժանդակ աշխատակազմ (ֆինանսական օգնական, ադմին-օգնական, ծրագրի ազգային համակարգող, իրավաբանական հարցերով ազգային աշխատակից (ժամանակի բաշխմամբ),

* 2 թարգմանիչ (12 շ/մ յուրաքանչյուրը),

* Ծրագրի մեքենան (ներառյալ վառելիք, պահպանություն, պահեստամասեր)

* Գրասենյակային տարածքի վարձակալում (ներառյալ կոմունալ ծառայությունների, հաղորդակցության եւ անվտանգության ծախսերը (ծախսերի բաժանում),

* Գրասենյակային եւ համակարգչային սարքավորումներ (ներառյալ նյութեր, գրասենյակային պիտույքներ, առօրյա գործածության նյութեր եւ պահպանություն (ծախսերի բաժանում):

Ստեղծվելու է Ծրագրի Վերահսկիչ խումբ, որի կազմում ընդգրկվելու են Արաբկիրի ոստիկանության բաժնի պետը, ԵԱՀԿ ոստիկանության խորհրդատուն, ԵԱՀԿ տեղացի ոստիկան մասնագետները, Համայնքապետը կամ նրա տեղակալը, դպրոցներից մեկի

տնօրենը, եւ 1-2 այլ անդամներ համայնքներից: Այս խումբը ծրագրի հետագա ընթացքում կարող է վերածվել "քաղաքացիների խորհրդատվական խմբի": Ծրագրի վերահսկողության խումբը պետք է երաշխավորի տեսակետների եւ գործընկերային հարաբերությունների առկայությունը այն նպատակով, որ համայնքի հետ միասին մշակվեն Արաբկիրի շրջանի ոստիկանության բաժնում ներդրվող ոստիկանական գործելակերպը: Նրա գլխավոր իրավասությունը համարվելու է բացառիկ խորհրդատվության ապահովումը, եւ այն իրավունք չի ունենալու ոստիկանության առօրյա գործունեությանը միջամտելու հարցում:

Կառավարության անունից հանդես եկող գործընկերային կառույցը (Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը) - պատասխանատվություն է կրելու ծրագրի արդյունքում Կառավարության առջեւ ծագած պարտավորությունների կատարման համար, այսինքն.

* ԵԱՀԿ-ի կողմից արված խնդրանքի դեպքում ծրագրի գործունեության ազդեցության մասին հաշվետվությունները ներկայացնել ESC-ին,

* երաշխավորել, որ վերապատրաստման դասընթացների համար թեկնածուների առաջադրումը եւ համապատասխան միջոցառումները կատարվեն ժամանակին եւ պատշաճորեն,

* երաշխավորել, որ ուսուցման միջոցառումների մասնակիցները ներկայացնեն համապատասխան հաշվետվություններ իրենց ուսուցման մասին եւ իրենց փորձագիտական կարողությունները փոխանցեն իրենց գործընկերներին,

* երաշխավորել, որ վերապատրաստված աշխատակիցները մասն իրենց պաշտոններում փոխհամաձայնեցված ժամանակաշրջանի ընթացքում:

7.4 Ելքային ռազմավարությունը

Համայնքամետ ոստիկանության մեթոդների ներդրումը պահանջում է առնվազն միջնաժամկետ ռազմավարություն: Չնայած ներկա ծրագիրը շահագրգիռ մարմինների համար հանգեցնելու է կոնկրետ օգուտների, դրա կենսունակությունը կախված է լինելու ամբողջ երկրում նոր մեթոդների վերջնական տարածման հանգամանքից: Սրա համար պահանջվելու է Հայաստանի իշխանությունների լիարժեք պարտավորվածությունը եւ զգալի միջազգային աջակցությունը երկարատեւ ժամանակահատվածով:

Սույն ծրագրի շրջանակներում լուծվելիք խնդիրները հավանության են արժանացել Հայաստանի ոստիկանության համակարգի աջակցության ոլորտում գործող խոշոր դոնոր կառույցների, ինչպես օրինակ, ԵՄ-ի եւ ԱՄՆ կառավարության կողմից: Ինչպես նաեւ, ծրագրով նախատեսված նպատակները լիովին համընկնում են նշված դոնոր կառույցների նպատակների հետ, եւ ծրագրի ընթացքում ձեռք բերված առաջընթացը կպահպանվի այս դոնոր կառույցների կողմից իրականացվող հետագա գործունեության միջոցով:

Եվրոպայի Հարեան Երկրների Քաղաքականության (ENP) ծրագրի շրջանակներում ԵՄ-ի հանձնաժողովը ներկայումս Հայաստանի Կառավարության հետ սերտ համագործակցությամբ մշակում է Հայաստանի գործողությունների ծրագիրը: Հայաստանի համար նախատեսված գործողությունների ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքներում, որպես առաջնահերթ միջոցառումներ, նշված են Հայաստանի արդարադատության եւ Ներքին գործերի ոլորտում համագործակցության ապահովումը, ինչպես նաեւ Օրենքի իշխանության եւ Մարդու իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի հզորացումը:

Ինչ վերաբերում է ֆինանսական աջակցության հարցին, ապա Եվրոպայի Հարեան Երկրների եւ Փոխգործակցության ֆինանսավորման Ծրագիրը (ENPI), որը նախատեսված է Հարեան Երկրների քաղաքականության եւ գործողության ծրագրերի մշակման համար, 2007 թ.-ից սկսած զգալիորեն ավելացնելու է այն ֆինանսական միջոցները, որոնք տրամադրվելու են ENP գործընկեր-երկրներին, այդ թվում՝ Հայաստանին:

8. Բյուջեն

Յորդան	Բյուջեն (Եվրոյով)
Աշխատակազմի ընդհանուր ծախսերը	209,413
Ընդհանուր գործառնական ծախսերը	174,680
Ընդհանուր ակտիվները եւ սարքավորումները	137,400
Գրասենյակի ընդհանուր ծախսերը	14,900
Ընդամենը Ծրագրի համար	536,393

Բյուջետային բացվածքը

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.1	
Միջազգային աշխատակազմ	106,813
Տեղացի աշխատակազմ	10,800
Լամսական սպառողական վճար	75,600
Աշխատակազմի ընդհանուր ծախսերը	193,213
Ճանապարհածախսը	10,000
Ծառայությունները	19,200
Ընդհանուր գործառնական ծախսերը	29,200
Ընդամենը նյութական ակտիվները	15,000
Ընդամենը ակտիվների/սարքավորումների ծախսերը	15,000
Ընդամենը գրասենյակային ծախսերը	0
Ընդամենը Առաջադրանք 1.1-ի համար	237,413

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.2	
Աշխատակազմի ընդհանուր ծախսերը	0
Ընդհանուր գործառնական ծախսերը	0
Ընդամենը ակտիվների/սարքավորումների ծախսերը	0
Ընդամենը գրասենյակային ծախսերը	0
Ընդամենը Առաջադրանք 1.2-ի համար	0

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.3	
Աշխատակազմի ընդհանուր ծախսերը	0
Խորհրդատվություն եւ ենթապայմանագրերի կնքում	6,500
Ծառայությունները	1,000
